

«ՄԱՀՄԱՆԻ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՇԵՔԻԱԹԱՅԻՆ
ԱՇԽԱՐՀԻ ՆՇԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Շեքիաթային աշխարհը, լինելով յուրովի նշանային համակարգ, բնորոշվում է այդ նշանների իմաստներով և հարաբերություններով: Մեր կարծիքով, դրանց մեջ ամենահիմնականներից մեկը սահմանն է:

Հիշեցնենք, որ Յու.Մ.Լոտմանը «սահմանի» հասկացությունը ներմուծում է իր վերջին՝ սեմիոսֆերային նվիրված հոդվածներում¹: Հիմնականում «սահմանը» նրա աշխատանքներում դիտարկվում է իբրև սեմիոսֆերայի սահման: Ի մի բերելով նշանագիտության զարգացումը Լոտմանն ընդգծում է, որ այն անցել է որոշակի ճանապարհ՝ առանձին նշանի վերլուծությունից դեպի նշանային համակարգի վերլուծություն և ապա՝ մինչև վերջինիս ամբողջականությունը՝ ընդհանուր նշանագիտական ոլորտը: Նա շեշտում է, որ թեև իբրև ուսումնասիրության առարկա՝ սեմիոսֆերան ամենավերջինն է, սակայն ըստ տրամաբանության՝ այն նախորդ երկուսի գոյության նախադրյալն է:

Անշուշտ, սեմիոսֆերայի տարածքը վերացական բնույթ է կրում, բայց «միայն այդպիսի տարածքի ներսում է հնարավոր դառնում հաղորդակցության գործընթացների և իրականացում, և նոր տեղեկատվության ստացում: <...> Սեմիոսֆերան բնորոշվում է մի շարք հատկանիշներով, որոնցից առաջինը սահմանազատվածությունն է»²:

Այդ սահմանազատվածության հիմնական գրսերումներից է սահմանի հասկացությունը: Քանի որ սեմիոսֆերայի տարածքը կրում է վերացական բնույթ, նրա սահմանը ևս չի կարելի պատկերացնել երևակայության առարկայական միջոցներով:

Սակայն Լոտմանի աշխատանքներում հանդիպում են նաև տվյալ նշանային համակարգն իբրև առանձին աշխարհ ընկալելու փորձեր: Օրինակ, բնակելի տարածքը և անտառը, ցերեկային և գիշերային կյանքը, վերգետնյա և ստորերկրյա աշխարհը և այլն:

Մեր աշխատանքում փորձ է արվում դիտակել, թե ինչ բովանդակություն է պարունակում «սահմանը» շեքիաթային աշխարհում և ինչ դեր է խաղում այն: Ամենակարևորն այստեղ հետևյալն է. «սահմանը» մենք վերց-

¹ Ю.М. Лотман. Понятие границы // Ю.М. Лотман. Внутри мыслящих миров. Человек – Текст – Семносфера – История. М.: "Языки русской культуры", 1996. с. 464.

² Ю.М. Лотман. Семносфера. <http://semiotics.ru/sphere/semiosphere.html>

նում ենք իբրև նշան վերացական իմաստով, այսինքն՝ դա չի՝ կարելի մեկնաբանել իբրև ֆիզիկական տարածք, առարկա, նյութական որևէ իր:

Այսինքն՝ դա մի գաղափար է, որը կարող է ունենալ տարբեր դրսևորումներ: Օրինակ՝ դուրը կամ ջուրը (մասնավորապես ջրհորը) բացի իրականից, ունեն նաև կախարդական իմաստ. դուրը ծառայում է ոչ միայն տունը դրսից անջատելու համար, այլև ունի մոգական իմաստ. երբեմն բացելով դուրը՝ հերոսը հայտնվում է ուրիշ աշխարհում:

Հայտնի է, որ բնորոշելով նշանը՝ նշանագիտության ստեղծողներից մեկը՝ Ֆ. դը Մոսյուրը, որպես նշանին հատուկ ամենակարևոր հատկություն՝ ընդգծում է նշանի չպատճառաբանված լինելը: Այլ կերպ ասած՝ նշանակելիի (իմաստ) և նշանակիչի (ձև) միասնությունը պայմանավորված չէ բնական կապով:

Նույն կերպ սահմանը հեքիաթում ունի այնպիսի հատկանիշներ, որոնք մերձեցնում են նրան հենց նշանին: Օրինակ, «սահմանի» իբրև նշանի չպատճառաբանվածությունը, պայմանականությունը հեքիաթում դրսևորվում է հետևյալ ձևով. այն, ինչ սահման է մեկի համար, կարող է սահման չլինել մյուսի համար:

Այն, որ «սահմանը» վերաբերում է հեքիաթային նշանի համակարգին, ամրագրվում է նաև հետևյալ իրողությամբ. «սահմանը» հնարավոր է խախտել որոշակի ոչ սովորական գործողություններով, որոնց թվում հատուկ տեղ է տրվում լեզվական բանաձևերին: Կարծես թե հեքիաթի ստեղծողը «սահմանը» և մարդկային խոսքը ենթագիտակցաբար միևնույն հարթության վրա է դնում: Այդպիսի ընդհանուր հարթություն իրոք կա. դրանք երկուսն էլ նշան են:

«Սահմանը»՝ իբրև վերացական նշանագիտական հասկացություն, հեքիաթներում ի հայտ է գալիս իր մի քանի դրսևորումներով: Մեր հոդվածում դիտարկելով 10 ռուսական³ և 10 հայկական⁴ հեքիաթներ՝ նկատել ենք հետևյալը. առաջին՝ սահմանը հեքիաթներում զուտ աշխարհագրական ու տեղանքային դրսևորում կարող է ունենալ, որը կարող է, սակայն, որևէ էական դեր չխաղալ տվյալ պատմության համար: Օրինակ՝ քաղաքի դարպասներն արդեն փակ էին, և հերոսը՝ ստիպված քնում է դրսում և միայն առավոտյան մտնում քաղաք, սակայն դա պատումի համար որևէ էական նշանակություն չունի («Թակավորի իրեկ տղեն»): Աշխարհագրական սահման է ծովը «По щучьему веленью» հեքիաթում, երբ հերոսը նավ է վարձում, ծովն անցնում, որ գտնի արքայադստերը, հետո հյուրերն էլ են

³ А. Н. Афанасьев. "Народные русские сказки". Москва 1984, том I.

⁴ «Հայկական ժողովրդական հեքիաթներ», Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան 1980

նավով գալիս: Այստեղ, ակնհայտորեն, ցանկություն կա ցույց տալ, որ հյուրերը հեռվից, ուրիշ տեղից են գալիս, ծովը հեռուն, օտարը, այսինքն՝ հենց «սահմանն» է խորհրդանշում: Ի դեպ, թեև այստեղ չենք անդրադարձել հեղինակային հեքիաթին, սակայն նշենք, որ նույն դերն է կատարում ծովը նաև Պուշկինի «Сказка о царь Салтане» հեքիաթում. ցարի կինն ու որդին, հայտնվելով կղզում, փաստորեն անհետանում են: Եթե Գվիդոնի հայրակական արքունիք զնալն իրոք արգելված է, ապա ինչն է խանգարում արքային այցելել իր սիրած կնոջն ու որդուն. ուրեմն սա զուտ պայմանականություն է: Մեկ այլ դեպքում հերոսուհին դիտավորյալ տուն է սարքում սահմանի վրա՝ յոթ ճանապարհի կենտրոնում, որպեսզի գնացող-եկողից տեղեկություններ իմանա իր ամուսնու մասին («Արլի աղաջ»): Նույն հեքիաթում ծովից այն կողմը գրեթե անհասանելի «աշխարհի ծայր» է խորհրդանշում, որտեղ փերիները տանում ու գերության մեջ են պահում հերոսին: Եվ եթե առաջին երկու հեքիաթներում «սահմաններն» անցանելի են, քանի որ զուտ աշխարհագրական իմաստ ունեն, ապա երրորդը՝ գրեթե անանցանելի, և այն կարողանում է անցնել միայն հերոսը՝ անսովոր միջոցով՝ կախարդական ձևով:

Երկրորդ՝ կարծում ենք, որ հեքիաթի համատեքստում «սահման» ասելիս պետք է նկատի ունենալ նախևառաջ իրական և կախարդական աշխարհների սահմանը: Ընդ որում, կախարդական աշխարհ ասելիս չենք ենթադրում, որ այդտեղ ամեն ինչ կախարդական է և ամեն ոք՝ կախարդ, պարզապես այդ տարածքում հնարավոր են իրադարձություններ, որոնք անհնար են իրական աշխարհում:

Որպես կանոն՝ այդ «ուրիշ» աշխարհի «սահմանները» շատ հստակ են, ու հերոսը քաջ գիտի, թե ուր է գնում, իրեն ինչ է սպառնում և ինչպես հաղթող դուրս գալ փորձանքից: Այդ տեղեկությունը հերոսը ստանում է երեք կամ յոթ ճանապարհների խաչմերուկում, որտեղ նրան որևէ կերպ՝ մարդու, կենդանու կամ որևէ այլ միջոցով զգուշացվում է, թե ինչ է նրան սպասում տվյալ տարածքում: «Сказка об Иване-царевиче, жар-птице и о сером волке» հեքիաթում, օրինակ, երեք ճանապարհների բաժանման կետում տեղեկությունը պարզապես զրկված էր մի այսն վրա. «Кто поедет от столба сего прямо, тот будет голоден и холоден; кто поедет в правую сторону, тот будет здоров и жив, а конь его будет мертв (ինչը միջնադարում նույն մահն էր նշանակում, քանի որ մենամարտում հետիոտնը չէր կարող դիմադրել հեծյալին); а кто поедет в левую сторону, тот сам будет убит, а конь его жив и здоров останется». «Марья Моревна» հեքիաթում բաբա-յագային մարդկանց աշխարհից բաժանում էր հրե գետը, և հերոսը գիտեր՝ ինչպես դրա վրայով

անցնել: “Иван Быкович” հեքիաթում հերոսը գիտեր, թե ուր է գնում՝ դների երկիրը՝ “На реку Смородину, на калиновый мост”:

Իրական և կախարդական աշխարհների հարաբերությունն իրար նկատմամբ ոչ բոլոր հեքիաթներում է նույնական. կան հեքիաթներ, որտեղ այդ հարաբերությունը նմանվում է ֆիզիկական տարածքների հարաբերության, այսինքն՝ մեկից պետք է դուրս գաս, որ մտնես մյուսը, նրանց սահմանը հստակ է, ինչպես “Сказка об Иване-царевиче, жар-птице и о сером волке”, “Иван Быкович” հեքիաթներում: Սակայն մյուս դեպքում իրական և հեքիաթային աշխարհներներն անջատված չեն, դրանք, ասես, «ներմուծված» են իրար մեջ, և հերոսը պատահաբար է հայտնվում «օտար» վայրում՝ սովորական երկրային ճանապարհի կամ հեքիաթային աշխարհի մուտքի դեր կատարող որևէ վայրի միջոցով: «Թափավորի ախչիկյն ու ախկատ տղան» հեքիաթում նման մուտք է ջրհորը, որտեղ հերոսը մտնում է ջուր հանելու, սակայն ստորերկրյա աշխարհում ապրող մարդը նրան տանում է իր երկիրը: Անշուշտ, այդ աշխարհների հարաբերությունը և հերոսների անցումը մեկից մյուսը փոխկապակցված, սակայն նաև առանձին գաղափարներ են: Երկրորդ գաղափարի համար հեքիաթների երկու աշխարհների հարաբերակցությունն անշուշտփելի և նուրբ փոխներթափանցվածություն է: Առաջին դեպքում աշխարհների սահմանգիծը նման է ֆիզիկական սահմանի, երկրորդ դեպքում դա փիճակների փոփոխություն է:

Կախարդական աշխարհի բնակիչները հերոսի նկատմամբ լինում են ինչպես անհյուրընկալ, այնպես էլ հյուրընկալ: Անհյուրընկալները սովորաբար հարցնում են, թե ինչու է եկել անկոչ հյուրը, ու նման հարցումները գրեթե նույնությամբ կրկնվում են հեքիաթներում: Օրինակ՝ «Թափավորի իրեկ տղեն» հեքիաթում երեք, հինգ և յոթ գլխանի դներն իրենք են մոտենում հերոսին ու ասում գրեթե նույն բանը. «Հէ, իսանօղի-իսան, հավկն ուր թեվօվ, օծն ուր պօրդօվ իմ սայման չմդդէ, դու քանի՝ գլխանի յէ, օր մդեր իս իմ հող»։ “Сказка об Иване-царевиче, жар-птице и о сером волке” հեքիաթում գայլն ասում է, չէ՝ որ գրված էր, որ եթե այս ճանապարհով գաս, ձիդ կկորցնես, ու սպանում է ձիուն: Իսկ եթե տվյալ տարածքի տերը չի հանդիպում հերոսին, քանի որ ինչ-որ մեկը թաքցրած է լինում նրան, ապա օտարի ներկայությունը զգում է հոտառությամբ: Դրանք նույնպես գրեթե միշտ նույն ձևակերպումներն են. հայերեն հեքիաթների դեպքում նա ասում է՝ մարդու հոտ է գալիս, իսկ ռուսերենի դեպքում, ուշագրավ է, որ առավել հաճախ ասում է՝ ռուս մարդու հոտ է գալիս, ինչպես “Кошей бессмертный” հեքիաթում. “Фу-фу! Русской коски слыхом не слыхать, видом не видеть, а русская коска сама на двор пришла!”

Կախարդական աշխարհի «հյուրընկալ» ներկայացուցիչներ են՝ օրինակ՝ «Ведьма и Солнцева сестра» հեքիաթում արևի քույրը, որն Իվանին ընդունում է իր տանը, իսկ հետո փրկում մարդակեր քրոջից։ Նույն կերպ զայլն օգնում է հերոսին «Сказка об Иване-паревиче, жар-птице и о сером волке» հեքիաթում։ Ստորերկրյա աշխարհի տերն ընդունում ու նվերներ է տալիս հերոսին «Թակավորի ախչիկյն ու ախկատ տղան» հեքիաթում։ Երբեմն հերոսները նույնիսկ հաց են ուտում ու զիշերում բաբա-յազաֆի մոտ, մի կերպար, որը սովորաբար բացասական է՝ օրինակ՝ «Иван Быкович» հեքիաթում։

Կախարդական աշխարհին պատկանող մարդիկ ու արարածները սովորաբար ապրում են մարդկանցից հեռու, այսինքն բաժանված են նաև տարածությամբ, ուսեն իրենց տարածքը, որտեղ մտնողն ընկալվում է որպես «օտար» և որին նրանք այնքան էլ ուրախ չեն տեսնել։ Այդուհանդերձ, ինչպես արդեն նշել ենք, այս երկու աշխարհները միշտ չէ, որ միմյանցից զատված են, և կան շատ օրինակներ, երբ իրական և կախարդական հերոսներն ապրում են միևնույն «տարածքում», որտեղ էլ կատարվում են հրաշքները։ Այդպես է, օրինակ՝ «Թակավորի իրեկ տղեն», «Վարթ-Մանուշակի հեքիաթը», «Համզե փահլեվան», «Դունյա գյոզալի հեքիաթը», «Летучий корабль», «По шучьему веленью», «Иван Быкович» հեքիաթներում։ Այսպես՝ «Թակավորի իրեկ տղեն» հեքիաթում կախարդ գորանչն ապրում էր հենց տվյալ թագավորության արքունիքում և ամեն երեկո կախարդական գավազանով թագավորին որևէ կենդանի էր դարձնում։ Ճիշտ է, նրա կախարդանքը երկար չի տևում, քանի որ հեքիաթի ավարտին նա պատժվում է, ու կախարդանքն էլ ավարտվում, սակայն չպետք է մոռանալ, որ հեքիաթի ավարտին բոլոր չարերն են պատժվում, անգամ՝ անմահները։

Հեքիաթներում կան նաև կախարդված անձինք, որոնք ժամակակավորապես են պատկանում նաև մեկ այլ աշխարհի, իսկ երբ կախարդանքը վերջանում է, նրանք նորից մարդ են դառնում և վերադառնում իրենց սովորական իրական կյանքին։ Առավել հաճախ նրանք դարձած են լինում վիշապ, ինչպես «Թակավորի իրեկ տղեն» հեքիաթում կամ գորտ («Թակավորի ախչիկյն ու ախկատ տղան») կամ որևէ այլ կենդանի կամ իր։

Երբորդ՝ հեքիաթներում հաճախ է հանդիպում նաև իրական և անդրշիրիմյան աշխարհների «սահմանը», որը սովորաբար անցանելի է մեկ կողմի համար։ Սակայն հեքիաթներում հաճախ են վերակենդանացման դեպքերը, ինչը մյուս կողմից այս կողմ անցնելն է փաստորեն։ Քանի որ դրանց վրա խիստ արգելք է դրված, ուստի «սահմանախախտումները» կատարվում են միայն որոշակի գործողությունների միջոցով։ Ամենատարածվածն այս դեպքում, անշուշտ, հերոսի մահն ու վերակենդանացումն է՝

տարբեր միջոցներով, առավել հաճախ՝ կենդանաբար ջրի միջոցով: Այդպես է «Марья Моревна» և «Сказка об Иване-царевиче, жар-птице и о сером волке» հեքիաթներում: Հայ հերոսները որոշ դեպքերում վերակենդանացնում են Սուրբ Գրքի միջոցով, ինչպես «Մարդակերպ ձուկը» հեքիաթում:

Այս երկու աշխարհների այլ հարաբերություններ ևս պատահում են: Այսպես՝ «Համզե փառլեվան» հեքիաթում ամուսինները պայմանավորվել էին իրար հետ մեռնել, բայց կիկը շուտ է մեռնում: Հրեշտակը, տեսնելով ամուսնու տառապանքները, խորհուրդ է տալիս, թե ինչպես կնոջն անդրշիրիմյան աշխարհից հետ քերի, իսկ հետո նաև՝ թե ինչպես անշնորհակալ կնոջը նորից նույն տեղն ուղարկի: Իսկ «Ведьма и Солнцева сестра» հեքիաթում էլ մի քանի հերոսներ գիտեին, թե երբ են մեռնելու՝ երբ բոլոր ասեղները կոտրվեն, երբ ծառերն ու լեռները վերջանան, իսկ հերոսը նրանց կյանքը երկարացնում է՝ նրանց նորից տալով իրենց կյանքի սահմանը խորհրդանշող իրերը՝ այդպիսով հեռացնելով կյանքի «սահմանագիծը», ուստի «սահմանն» ունի նաև ժամանակային դրսևորում:

Իրական և անդրշիրիմյան աշխարհների «սահմանի» հետ են կապված նաև սահմանային իրավիճակները, երբ հերոսին մեծ վտանգ է սպառնում, երբ նա կարող է հայտնվել սահմանի այն կողմում՝ մահանալ, կարող է և՛ ոչ: Նման իրավիճակներ են, առաջին հերթին, այն դեպքերը, երբ հերոսին ուղարկում են կամ ինքն է գնում որևէ՝ գրեթե անհաղթահարելի փորձության՝ ինչ-որ բան իմանալու, ինչ-որ բան անելու, ինչ-որ առարկա բերելու: Ընդ որում, դրանք պատահական առարկաներ չեն, դրանք մահկանացուին օժտում են նրան ոչ հասանելի, կախարդական աշխարհին բնորոշ հատկությամբ: մենք սա ներկայացնում ենք որպես շատ նոսր սահմանի խախտում: «Թափավորի ախչիկյն ու ախկատ տղան» հեքիաթում հերոսը մտնում ու ողջ է դուրս գալիս ջրհորից, «Աքլի աղաջ» հեքիաթում հերոսին ուղարկում են անմահական ջուր ու խնձոր բերելու: Այս դեպքում հաճախ են հանդիպում կոփվելը դների կամ այլ չար ուժերի հետ, որոնք նույնպես սահմանային իրավիճակներ են («Թափավորի իրեկ տղեն», «Хрустальная гора», «Иван Быкович»):

Դրանք նաև թագավորի փորձություններն են, ինչպես «Летучий корабль», «Иван Быкович» հեքիաթներում: փորձություններից մեկը շատ տաք չուզուն է բաղնիքում մեկ օր մնալն էր, որտեղից հերոսը դուրս է գալիս կենդանի: «Մարդակերպ ձուկը» հեքիաթում հերոսը պետք է խոսեցներ արքայադստերը, այլապես նրա գլուխը կկտրեին: Սահմանային իրավիճակի մեկ այլ ձև է, երբ հերոսին գցում են կամ նա ընկնում է մի տեղ, որտեղ կարող է և մահանալ: Դա, առաջին հերթին, տակառի մեջ մտցնելն ու ջուրը

զցելն է, ինչպես «Դունյա գյոզալի հեքիաթում» կամ “По шучьему веленью” հեքիաթում:

Սահմանային իրավիճակների այլ ձևեր ևս հանդիպում են հեքիաթներում, ինչպես «Մեվ էս ուզելի, թե սվտալը» հեքիաթում հերոսի մի տղային ջուրն է տանում, մյուսին՝ գալլը, «Վարթ-Մանուշակի հեքիաթում» հերոսուհուն զգում են ջրաղացի ջրի մեջ, ի դեպ այստեղ ևս ևս հեքիաթի սկզբում է սահմանային իրավիճակ. չար սկսեսուրը ծննդաբերելիս չի օգնում հարսին, որ ևս մեռնի: Հասկանալի է, որ ծննդաբերությունը ևս պետք է դասվի մահվան և կենաց սահմանային իրավիճակների թվին: «Դունյա գյոզալի հեքիաթում» մայրը մարդ է վարձում, որ սպանի իր երեխաներին, սակայն ևս չի սպանում:

Սահմանային շատ հետաքրքիր իրավիճակ է նկարագրված «Ազահ տերդերը» հեքիաթում. հրեշտակը ցանկանում է ստուգել տերտերի ազահությունը և երկու անգամ մահացու իրավիճակ է ստեղծում՝ նավն է ջրասույզ անում, կախաղան են պատրաստվում բարձրացնել տերտերին, սակայն ևս չի խոստովանում հանցանքը, այդուհանդերձ շատ հեշտորեն խոստովանում է, երբ դրա համար նրան ոսկի են առաջարկում: Սահմանային իրավիճակներն, այդպիսով, բացահայտում են մարդու էությունը:

Եվս տարածված և սահմանի հետ առնչվող պահ. «Դունյա գյոզալի հեքիաթում» հերոսը պատմում է, թե ինչպես հյուսնը փայտից աղջիկ է սարքում, դերձակը շոր է կարում, իսկ տերտերը կենդանացնում է նրան, և հարցնում է, թե ում պետք է հասնի աղջիկը: Հերոսուհին որոշում է, որ աղջիկը հասնում է տերտերին, քանի որ ևս է կենդանացրել նրան, այլ կերպ ասած՝ անցում է կատարել աշխարհից աշխարհ: Նույն կերպ երկրորդ պատմության դեպքում ևս որոշում է, որ աղջիկը հասնում է այն մարդուն, ով վերականգնացրել է նրան, այսինքն՝ կարևորվում է սահմանախախտումը:

«Սահմանների» խնդրի որոշ կողմեր են բացահայտում դրա հետ անմիջականորեն կապ ունեցող կերպարները: Լուտմանը նշում էր. «... անձինք, որոնք հատուկ օժտվածության (կախարդներ) կամ աշխատանքի տեսակի (դարբին, ջրաղացպան, դահիճ) շնորհիվ պատկանում են երկու աշխարհների և կարծես թարգմանիչներ են, բնակվում են տարածքային ծայրամասում, մշակութային և միջոլոգիական տարածքի սահմանին»:⁵ Իբրև «սահմանի անցումը սպասարկողներ»՝ հեքիաթներում առկա են ինչպես մարդիկ, այնպես էլ կենդանիներ, բնական օբյեկտներ և հորինված կերպարներ:

⁵ Ю.М. Лотман. Семиосфера <http://semiotics.ru/sphere/semiosphere.html>

Մեր դիտարկած հեքիաթներում «սահմանի» անցումը սպասարկող մարդիկ են՝ ջրհորի մարդը, որը հերոսին տեղափոխում է ուրիշ աշխարհ («Թակավորի ախչիկյն ու ախկաս տղան»), կախարդ գոթանչը, որը չարաշահում է իր գավազանի հատկությունը՝ մարդուն տեղափոխելով կենդանիների աշխարհ («Թակավորի իրեկ տղեն»):

Սահմանների հետ կապված կենդանիներն ու բնական օբյեկտներն են՝ աղավկները, որոնք օգնում են հարսին երեխա ունենալ ու այդ երեխային օժտում են տարբեր շնորհներով («Վարթ-Մանուշակի հեքիաթը»), կախարդական ձին, որով հերոսն անցնում է ծովը («Աքլի աղաջ»), կախարդական թռչունը, որի ձուն ու մարմնի մասերն ուտողն ամեն առավոտ բարձի, տակ մի քսակ ոսկի էր գտնում («Դուսյա գյոզալի հեքիաթը»), կախարդական ձուկը, որը մարդու կերպարանքով օգնում է հերոսին («Մարդակերպ ձուկը»), բազեն, արծիվն ու ագռավը, որոնք ամուսնանում են երկրային աղջիկների հետ, իսկ հետո կենդանացնում են մեռած հերոսին, գայլը, որը ոչ միայն գիտեր շատ բան, այլև կարողանում էր կերպարա-նափոխվել («Сказка об Иване-царевиче, жар-птице и о сером волке»):

Մեր դիտարկած հեքիաթներում մտացածին հերոսների թվում են հայկական հեքիաթներում՝ գիշերվա և ցերեկվա թելի կծիկը քանդող-հավաքող ծերունին («Թակավորի իրեկ տղեն»), հրեշտակը, որը խորհուրդ է տալիս, թե ինչպես հերոսը կնոջն անդրժիրիմյան աշխարհից հետ քերի («Հանգե փահլեվան»), իսկ մեկ այլ հեքիաթում հրեշտակը փորձում է տերտերի ազահությունը («Ազահ տէրդերը»), հուրի փերիները, որոնք գողանում են հերոսին («Աքլի աղաջ»), երեք, հինգ և յոթ զլխանի դները («Թակավորի իրեկ տղեն»): Ռուսական հեքիաթներում՝ արևի քույրը («Ведьма и Солнцева сестра»), կոշչեյը՝ («Кошей бессмертный», «Марья Моревна»), բարա-յազան՝ («Иван Быкович», «Марья Моревна»), երեք, վեց և տասներկու զլխանի դները («Иван Быкович», «Хрустальная гора»):

Շատ հաճախ նման «սահմանային մարդկանց ու արարածների» հետ շփվելու համար գործածվում են հատուկ՝ քարացած բառային ձևա-կերպումներ կամ որևէ արարողություն կամ պարզապես գործողություն: Օրինակ, «Աքլի աղաջ» հեքիաթում հուրիներն ասում էին հատուկ բառեր ու գործողություններ կատարում. ծառին ասում էին՝ «Աքլի աղաջ, արլի աղաջ», ինչից հետո ծառը կոտնում էր, վերցնում էին նրա վրայի զամբյուղը, հատուկ ձիադուրով հարվածում և զամբյուղի միջից դուրս էին բերում թագավորի որդուն, հետո նույն ձևով նրան պահում էին զամբյուղում՝ գերության մեջ: Ռուսական ոսկե ձկնիկի մասին և գրեթե նույն բովանդակությամբ մեկ այլ՝ «Жадная старуха» հեքիաթներում սահմանը սպասարկող էակների՝ ոսկե ձկնիկի և ծառի հետ շփվելու համար ծերունին առաջին

դեպքում նույն բառերով է կանչում ձկնիկին՝ “Рыбка, рыбка! Стань в море хвостом, ко мне головой”: Իսկ ծառին նա պարզապես կացնահարում է: Չուկն ու ծառը նույնպես նրան նույն ձևակերպումներով են պատասխանում. “Не тужи, старик! Ступай домой да молись Богу, все будет сделано” և “Хорошо, ступай с богом! ”: Այսպիսի պատասխանը նշանակում էր, որ ամեն ինչ կլինի ըստ ծերունու ցանկության, անակնկալներ չեն լինի, իսկ երբ սովորական երկխոսությունն այլևս չի լինում, այդ ժամանակ արդեն պարզ է դառնում, որ երկու աշխարհների միջև շփումը խզվեց: Առաջին հերթաթի դեպքում ձուկը պարզապես լուռ է, և կախարդանքը չքվում է, իսկ երկրորդի դեպքում ծառը նրանց արջ է դարձնում: “Иван Быкович” հերթաթում հավի ոտքերով խրճիթի համար կար հատուկ դիմելաձև՝ “Избушка, избушка, повернись к нам передом, к лесу задом; нам в тебя лезти, хлеба-соли ести”. “Летучий корабль” հերթաթում հատուկ ծես կար ծառի համար. պետք էր երեք անգամ խաչակնքել, հարվածել ծառին ու հետո պառկել գետնին ու չնայել, թե ինչ է կատարվում (թոչող նավն ինքն իրեն էր սարքվում):

Ուշագրավ է, որ որոշ դեպքերում հերոսները ոչ միայն գիտեն, թե ինչպես շփման մեջ մտնել նման արարածների հետ, այնպես էլ՝ թե ինչպես նրանց սպանել, և դա էլ գրեթե ծիսական արարողություն է կամ քարացած բառային արտահայտություն: Հայկական հերթաթներում վիրավոր դները խնդրում են հերոսին՝ մեկ անգամ էլ իրենց թրով խփել, քանի որ մեկից ավելի զարկի դեպքում գլուխները կաճեն, ու նրանք ավելի կհզորանան, սակայն հերոսը գրեթե միշտ նույնն է պատասխանում՝ «.... յես իմ մօրէն մէ անկամ էմ ծնվէ, մէ աստվաճ ունիմ ու մէ զարգ» («Թակավորի իրեկ տղէ»): Ռուսական հերթաթներում ավանդաբար կոշշեի կամ մեկ այլ շար հերոսի մահն ինչ-որ իրի հետ է կապված լինում. “Кошей бестмертный” հերթաթում Կոշշեյն ասում է. “У меня смерть, в таком-то месте: там стоит дуб, под дубом ящик, в яшике заяц, в зайце утка, в утке яйцо, в яйце моя смерть”. “Хрустальная гора” հերթաթում արքայադուստրը պատմում է, թե ինչպես է հնարավոր կործանել կախարդական աշխարհի կենտրոն Բյուրեղապակե լեռը. “Меня унес змей о двенадцати головах; живет он на батюшкином озере; в том змее сундук таится, в сундуке - заяц, в зайце - утка, в утке - яичко, в яичке - семечко; коли ты убьешь его да достанешь это семечко, в те поры можно хрустальную гору извести и меня избавить”. “Иван Быкович” հերթաթում 12 գլխանի դին հնարավոր էր սպանել միայն կտրելով նրա կախարդական մատը: Սակայն նույն կոշշեյն ու բաբա-յագան կարող են նաև այլ կերպ մահանալ, օրինակ, “Марья Моревна” հերթաթում բաբա-յագան ընկնում է հրե գետը, ինչ

կոշչէյին խփում է Իվանի ձին, հետո՝ Իվանը, այնուհետև նրա մարմինը փայտի հետ այրում են ու մոխիրը քամուն տալիս:

Շեքիաթի հերոսները հաճախ են խախտում «սահմանները», անցնում են մեկ աշխարհից մյուսը: Արդէն նշել ենք, որ դրա համար օգտագործվում են հատուկ խոսքեր կամ գործողություններ: Սակայն կան նաև իրեր, որոնք օգնում են նրանց «սահմանախախտումներ» անելիս: Ամենից հաճախ «սահմաններ» անցնելուն օգնում է ջուրը, հայկական հեքիաթներում՝ անմահական, իսկ ռուսական հեքիաթներում՝ մեռած ու կենդանի, որոնցով ցողելիս հերոսը վերակենդանանում է, մեռածների աշխարհից տեղափոխվում է ողջերի աշխարհ՝ ("Марья Моревна", "Сказка об Иване-царевиче, жар-птице и о сером волке"): Որոշ դեպքերում վերակենդանացնում են Սուրբ Գրքի միջոցով, ինչպես «Մարդակերպ ձուկը» հեքիաթում:

«Սահմաններ» անցնելուն նպաստող հատկություն ունի խոսքը, որն ասելիս կամ կախարդանքը սկսվում է կամ՝ ավարտվում, ընդ որում, դրանք կարող են լինել ինչպես կախարդական ձևակերպումներ, ինչպես "По учьему веленью" հեքիաթում, այնպես էլ տվյալ իրադրությունում գալական ուժ և ազդեցություն ձեռք բերող խոսքեր, ինչպես «Թակավորի փաշիկյն ու փսկատ տղան» հեքիաթում. գորտի մոտ հերոսն ասում է իր «զնած» խրատը՝ «Սոսով սիրածը աշխրթյի մէջը ըմեն ինչէն թանգ ի», ինչից հետո գորտը աղջիկ է դառնում: «Համզէ փահլէվան» հեքիաթում հերոսը պետք է նայեր դեպի արևելք և աստծուց երեք անգամ խնդրեր, որ իր կյանքի տասը տարիներից հինգը տրվեր կնոջը: Այդպիսով՝ այդ բառերը դառնում են տվյալ իրավիճակի անվանումը: Ճիշտ գործողությունը ևս կախարդական աշխարհի հետ շփվելու թույլտվության երաշխիք է, ինչպես "Хрустальная гора" հեքիաթում, երբ հերոսը ճիշտ բաժանում է մեռած ձիուն կենդանիների միջև, և թոչնի ու մրջյունի կերպարանք ընդունելու շնորհ է ստանում:

«Սահմանի բանալու» դերում կարող է հանդես գալ որևէ իր, օրինակ, կախարդական գավազանը «Թակավորի իրեկ տղեն» հեքիաթում, քարը "Кошечей бессмертный" հեքիաթում. քարի վրա կար գրություն՝ ով այն միանգամից կարողանար գցել սարի գագաթը, նրան էլ ճանապարհ կբացվեր դեպի սարը, այսինքն՝ դեպի կոշչէյի կախարդական աշխարհը: Նման դեր ունի ոսկե թեփուկներով ձուկը "Иван Быкович" հեքիաթում, որն ուտելով՝ արու գավակ են ունենում թագուհին, նրա խոհարարուհին ու՝ կովը: Այս նույն հեքիաթում կա մեկ այլ բանալի ևս՝ երազը, որը զարմանալիորեն տեսնում են թագավորն ու թագուհին միաժամանակ և իմանում են այն ոսկե թեփուկներով ձկան մասին, որը նրանց գավակ կպարզներ: Բանալի են թոչնի ձուն ու մարմնի մասերը, որոնք ուտողի գլխի տակ ամեն օր մի քսակ ոսկի կարող էր հայտնվել՝ "Դունյա գյոգալի հեքիաթը":

Հեքիաթներում արդեն նշվածներից բացի երբեմն հանդիպում են այլ «աշխարհների» հարաբերություններ ևս՝ իրենց յուրովի «սահմաններով»։ Մասնավորապես «Թափավորի իրեկ տղեն» հեքիաթում նման «աշխարհներ» են գիշերն ու ցերեկը, և հերոսը կարողանում է փոխել գիշերով ու ցերեկվա «սահմանը»։ Ճերուտուն, որը երկու կծիկ ուներ՝ սև ու սպիտակ, կապում է, սև կծիկը, այսինքն՝ գիշերը քանդում, որ գիշերը երկարի, մինչև ինքը կրակ բերի։ Հետո երբ իր գործն ավարտում է այդ երկարած գիշերով մեջ, ծերունու ձեռքերն ու ոտքերը քանդում է ու ասում՝ դե, թո գործը շարունակիր։

«Մեկ էս ուզելի՞, թե սվտակյ» հեքիաթն էլ սևի ու սպիտակի՝ լավ ու վատ օրերի հերթագայության մասին է։ Թագավորին երագում հարցնում են՝ սև՝ էս ուզում, թե՞ սպիտակ։ Սևն ուզելուց հետո թագավորը դառնում է աղքատ մարդ, կորցնում է հարստությունը և ընտանիքը, տարիներ անց ամեն ինչ վերականգնվում է, և սկսվում է նրա «սպիտակ» շրջանը։

Ուշագրավ է «Դուկյա գյոզալի հեքիաթում» այն պահը, որ ջիուդը գիտեր կախարդական թոչնի օրգանների հատկության մասին, հավատում էր և ուտելով արդեն ոչ թե այդ թոչնի, այլ սովորական ագռավի սիրտն ու թորը՝ ագռավ է դառնում, այսինքն՝ էլի շփվում է կախարդական աշխարհի հետ, բայց ոչ իր մտածած ձևով, այլ այնպես, ինչպես արժանի էր։

Սահմանի գաղափարի հետ կապված անսովոր պահ կա «Иван Быкович» հեքիաթում, երբ թագուհին, խոհարարուհին և կովը, ուտելով ոսկե թեփուկներով ձուկը, երեքն էլ արու զավակ են ունենում, ընդ որում, կովը նույնպես մարդու որդի է ունենում, որն էլ հենց դառնում է հեքիաթի հերոսը։ Սա ոչ հաճախ հանդիպող դեպք է, երբ կենդանին մարդ է ծննդաբերում։

Ինչպես արդեն ասացինք, հեքիաթի աշխարհները տարբեր տրամաբանությամբ, տարբեր արժեքներով և վարքի կանոններով օժտված աշխարհներ են՝ ակնառու կամ ոչ ակնառու կերպով սահմանազատված իրարից։ Նույնիսկ երբ կապը կտրվում է, հեքիաթի հերոսները (և ունկնդիրը) գիտեն, որ ուրիշ «աշխարհ» կա։ Սակայն երբեմն, որոշակի պայմաններում, այդ «սահմանը» հնարավոր է խախտել, թեև (սովորաբար) այն անանցյալի է։ «Սահմանախախտության» շնորհը տրվում է, օրինակ, թուրքին. դրանով է առանձնանում հեքիաթի սիրելի հերոսը։